

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԱԳՅԱՆ ԻՆԳԱ ԷՊՈՒՐՈՂԻ

ԷՐԻԱՆԻ ԵՐԿԻՐԸ (Ք.Ա. VIII-VI ԴԴ.)

Է. 00. 03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2016

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВАГЯН ИНГА ЭДУАРДОВНА

СТРАНА ЭРИАХИ (VIII-VI ВВ. ДО Р. Х.)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой
степени кандидата исторических наук
по специальности 07.00.03 "Археология"

Ереван -2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում


Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Գիտական ղեկավար՝
պ. գ. թ. **Ս. Գ. Հնայակյան**
պ. գ. դ. **Օ. Ս. Խնկիկյան**
պ. գ. թ. **Ա. Ա. Բորոխյան**

Առաջատար կազմակերպություն՝
Հայաստանի պատմության թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. փետրվարի 25-ին՝ ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. հունվարի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու  **Հ.Ս.Մելքոնյան**

Тема диссертации утверждена в Институте
археологии и этнографии НАН РА

Научный руководитель:

к.и.н. С. Г. Амаякян

Официальные оппоненты:

д. и.н. О. С. Хнкиян

к.и.н. А. А. Бобохян

Ведущая организация Музей истории Армении

Защита состоится 25-ого февраля 2016 г. в 14.00, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии в Институте археологии и этнографии НАН РА (адрес: 0025, Ереван 25, ул. Чаренца, 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 25 января 2016г.

Ученый секретарь специализированного совета:



к.и.н. У. С. Мелконян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թեմայի արդիականությունը

Հին աշխարհի պատմագիրները Հայկական լեռնաշխարհը և Հայաստանը դիտարկել են որպես աշխարհի ճանապարհների խաչմերուկներից մեկը. այս բնորոշումը կարելի է վերագրել ոչ միայն Հայաստանին, այլև ամբողջ Առաջավոր Ասիային, որը, շնորհիվ ունեցած աշխարհագրական դիրքի, իր վրա գրավել է և այսօր էլ գրավում է շատ պատմաբանների, հնագետների, հայագետների, ասուրագետների ուշադրությունը, որոնք մշտապես ցանկացել են ուսումնասիրել այս տարածաշրջանում եղած տարաբնույթ և տարժամանակյա բազմաթիվ հուշարձանները առաջավորասիական հզոր մշակույթների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Դարերի ընթացքում Առաջավոր Ասիայի բնակլիմայական, տնտեսական ու քաղաքական ճգնաժամերը հանգեցրել են նորանոր մշակույթների, պետական կազմավորումների առաջացմանը, զարգացմանը և անկմանը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հիմնահարցերից է Վանի թագավորության կազմավորման և վանտոսայան մշակույթի ձևավորման ու գոյատևման պատմությունը, այս պետության և նրա մշակույթի խաղացած դերի արժևորումը համաշխարհային պատմության և մշակույթի մեջ, նրա դերի, մշակույթի և օրգանական կապի անբաժանելիությունը ինչպես ավելի վաղ Հայկական լեռնաշխարհում ձևավորված հնագույն պետական կազմավորումների պատմությունից ու մշակույթից, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի հետվանտոսայան շրջանի պետական կազմավորումների պատմությունից ու մշակույթից:

Հարցի նկատմամբ մեր հետաքրքրությունը նաև բացատրվում է նրանով, որ խոսքը Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակրթություններից մեկի թողած մշակույթի տարածման, ներգործության և կրած փոփոխությունների մասին է: Թեմայի արդիականությունը կապված է Վանի թագավորության և մշակույթի ազգային և ապագային լինելու խնդրի հետ, նաև ներկայումս ընթացող առաջավորասիական մի շարք սոցիալ-մշակութային գործընթացների և քաղաքականության մի քանի հիմնական ուղղությունների հետ: Վանի թագավորության պատմության և մշակույթի մասին լիարժեք պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել այս երկրի պատմությունը, մշակութային արմատներն ու կապը մերձավորարևելյան այլ մշակույթների հետ: Այս առումով անհրաժեշտ է առանձին-առանձին ուսումնասիրել այն բոլոր ազգավաճակների պատմությունը և մշակույթները, որոնք, թ.ա. IX-VI դդ. նվաճվելով Վանի հզոր արքաների կողմից, մտան այս պետության կազմի մեջ: Ազգավաճակներ, որոնք բնորոշվում են որպես առանձին քաղաքական կազմավորումներ իրենց գոյատևման առանձնահատկություններով, քաղաքական կառուցվածքով, տնտեսությամբ, էթնիկական և սոցիալ-մշակութային առանձնահատկություններով և կրոնով: Այսպիսի ազգավաճակներից է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից մեկը՝ Շիրակը, որի տարածքը հիմնականում համապատասխանում է վանտոսայան գրավոր աղբյուրներում հիշատակված Երիախի երկրին: Արդյունքում առաջ են քաշվում այն առանձնահատկությունները, որոնք բնորոշում են Երիախի երկիրը որպես առանձին քաղաքական մի կազմավորում իր գոյատևման առանձնահատկություններով, քաղաքական կառուցվածքով, տնտեսությամբ, էթնիկական և սոցիալ-մշակութային առանձնահատկություններով և կրոնով: Ուրարտական սեպագիր աղբյուրներում բազ-

միցս հիշատակվող Երիախի երկրի՝ թագավորության և նրան հարևան մարզերի ու երկրների լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ է ոչ միայն գրավոր, այլև հնագիտական սկզբնաղբյուրների ուսումնասիրություն:

Աշխատանքի գիտական նորույթը

Այս տեսանկյունից ատենախոսության թեման դառնում է առավել կարևոր: Այստեղ համակողմանի վերլուծության են ենթարկվում պատմական Շիրակի տարածքում Երիախի ազգագավառի պատմաշխարհագրական առանձնահատկությունները, վարչական բաժանումը, քաղաքական պատմությունը, տնտեսությունը, բնակչության կազմը, կրոնը: Երիախի երկիրը ներկայացվում է ըստ սեպագիր և մատենագրական սկզբնաղբյուրների. վերջիններում տվյալներ կան տեղանունների, կրոնի, Շիրակի թեմիկական կազմի մասին, որոնք համադրելի են սեպագիր սկզբնաղբյուրներից եկող տեղեկությունների հետ: Մանրամասն ներկայացված են Երիախի՝ Ք.ա. VIII-VI դդ. ուրարտական և տեղական մշակույթին պատկանող հուշարձանները՝ բնակավայրերը, դամբարանները: Ուսումնասիրությունը ընդգրկում է ոչ միայն Երիախի, այլև նրա մերձակա հարևանների և Էթիունի (Հյուսիսային) համադաշնության պատմությունն ու մշակույթը, որոնք սերտաճած են միմյանց: Այս ամենը մի ամբողջական համակարգ է, որում դիտարկվում են նմանություններ և տարբերություններ Վանի թագավորության մյուս ազգագավառների հետ համեմատելիս:

Թեմայի կարևորությունը այն է, որ առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դառնում Վանի թագավորության ազգագավառներից մեկը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսումնասիրվող խնդիրը մի կողմից առնչվում է Հին աշխարհի առաջավորասիական քաղաքակրթությունների պատմությանն ու մշակույթին, մյուս կողմից այդ տարածաշրջանի մասը կազմող Հայաստանի պատմությանն ու մշակույթին:

Հիմնական նպատակն ու խնդիրները

Հայ պատմագիտության մեջ Երիախի երկրի սոցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքը, տեղի բնակչության էթնոժողովրդագրական իրավիճակն ու սոցիալական կազմը Ք.ա. VIII-VI դդ. ներկայացնող ու Վանի թագավորության վարչատարածքային համակարգում ունեցած դերի մասին բազմաթիվ տեղեկությունները ցրված են գրավոր աղբյուրներում, արձանագրություններում և գիտական գրականության մեջ: Սույն ուսումնասիրությամբ առաջին անգամ Հայաստանում գիտական շրջանառության մեջ է դրվում Երիախի երկրի մասին վկայող սեպագիր արձանագրությամբ ազաթե ուղունքը, որը պահպանվում է Վանի թանգարանում և Մարմաշենի ու Կուլիջանի արձանագրությունների հետ Երիախի երկրի մասին կարևոր աղբյուր է համարվում: Նաև ուրարտական արձանագրությունների մի շարք նոր ընթերցումներ: Երիախի երկրի տարածքում գտնվող՝ Գյումրու «Սև ամրոց» հուշարձանի ուրարտական դարաշրջանով թվագրվող կառույցից պեղված նյութերը, որոնք համադրվում են Շիրակի, Արարատյան դաշտի, Սևանի ավազանի համաժամանակյա հուշարձաններից հայտնի նյութերի հետ և Հ.Կարանյանի պատահական գտածոների տարժամանակյա հավաքածուն, որի մեջ ուշագրավ են Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող հնագիտական գտածոները:

Սույն աշխատանքի նպատակն ենք համարում ի մի բերել, լրացնել և ամփոփել Շիրակի Երիախի երկրի հին շրջանի՝ մասնավորապես բիայնական դարաշրջանի պատմությունը Ք.ա. VIII-VI դդ.՝ ներառյալ այս դարաշրջանին վերաբերող հայ և օտար պատմագիտական, հնագիտական, ժողովրդագրական,

փաստերն ու տեղեկությունները՝ ստեղծելով երիախի երկրի՝ թագավորության, պատմամշակութային ամբողջական պատկերը: Յույց տալ Երիախի երկրի խաղացած դերն ու նշանակությունը Վանի թագավորության պատմության և մշակույթի մեջ, ներկայացնել Երիախի երկիրը իր տնտեսությամբ, բնակչությամբ, նյութական մշակույթով և կրոնապաշտամունքային պատկերացումներով: Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

1. Հյուսիսային համադաշնության կազմում ընդգրկված Երիախի երկրի պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը Ք.ա. VIII-VI դդ., և դարակազմիկ համարվող ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան փուլի (Լճաշեն-մեծամորյան մշակույթ) որոշ դրսևորումների հարատևումը մինչև հելլենիզմ,

2. Ք.ա. VIII-VI դդ. պատմական Շիրակի տարածքում ձևավորված և Հյուսիսային համադաշնության մեջ կարևոր դեր խաղացող Երիախի և Նրա դաշնակիցների քաղաքական պատմության, տնտեսության, պատմական Շիրակի վարչական բաժանման, կրոնի, բնակչության կազմին առնչվող հարցերը,

3. ի մի բերել և ուսումնասիրել Ուրարտական Երիախի երկրի մասին եղած գրավոր և հնագիտական սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները, կազմել քարտեզներ Շիրակը Ք.ա VIII-VI դդ.,

4. օգտագործելով Շիրակի՝ Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող հնագիտական հուշարձաններից պեղված նյութերը կազմել Շիրակի հնագիտական հուշարձանների տարածությամբ, հուշարձանների և նյութերի տիպերն ու պարբերացումը բնորոշող աղյուսակներ ու դիագրամներ, այդ հուշարձանները համադրել և ժամանակագրորեն համեմատել Արարատյան դաշտի, Սևանա լճի ավազանի, Արագածոտնի մարզի համապատասխան հուշարձանների հետ,

5. Երիախի և հարևան երկրների «հոգևոր» ու «նյութական» մշակույթի ուսումնասիրությունը ըստ եղած սեպագիր, մատենագիտական և հնագիտական նյութերի (բնակավայրեր և դամբարաններ),

6. քննության առարկա դարձնել առկա նյութերը, որոնք առնչվում են ճարտարապետության, խեցեգործության, թաղման ծիսակարգի, հնաբուսաբանության, հնակենդանաբանության, հնամարդաբանության և այլ տվյալներին,

7. Հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել, թե թեմայի վերլուծությունը ուսումնասիրության այժմյան մակարդակում, Ք.ա. VIII-VI դդ. առումով, ինչ պատկեր է տալիս:

Աշխատանքի պաշտոնական արժևորումը

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Վաղ հնագիտություն» բաժնում և բաժնի «Ուրարտուի հնագիտություն» խմբում: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված ինը հոդվածներում և մեկ գրքում (տե՛ս գրականության ցանկ):

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Ներածություն

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի գործնական նշանակությունը, մեթոդական հիմքը, պաշտոնական արժևորումը, ժամանակագրական շրջանակները, տրված են հարցի սկզբնաղբյուրները և գրականությունը, ուրարտական արձանագրությունների համառոտ տեսությունը, Երիախի ուսումնասիրության պատմությունը, սկզբնաղբյուրների քննությունը և ուսումնասի-

րության առարկան հանդիսացող տարածքի հնագիտական ուսումնասիրության պատմությունը:

Աշխատանքի ժամանակագրական շրջանակը

Աշխատանքը հիմնականում ընդգրկում է Ք.ա. VIII-VI դդ.: Հենց այս դարերում է, որ Երիախին ընդգրկված էր Վանի թագավորության կազմում: Թեմայի ժամանակագրական շրջանակների մեջ են ներառված Ք.ա. VIII-VI դդ. վերաբերող վանտոսայան սեպագիր այն աղբյուրները, որոնք առնչվում են Երիախի երկրին, և պեղումների արդյունքում հայտնաբերված նույնաժամանակյա հնավայրերի և գտածոների վերլուծությունը: Թեմայի ժամանակագրական շրջանակներից զատ անդրադառնում ենք մինչվանտոսայան և հետվանտոսայան պատմամշակութային մի շարք կարևոր իրադարձությունների, որոնք նպաստում են Երիախի երկրի. պատմության և մշակույթի լիարժեք ուսումնասիրությանը:

Սկզբնաղբյուրներ: Վանի թագավորության արքաները, փոխառնելով ասորեստանյան սեպագիր համակարգը և այն հարմարեցնելով իրենց լեզվին, ցանկանում էին իրենց լեզվով շարադրել այն, ինչ որ իրենք արժանի էին համարում հիշատակության: Վանի արքաների արձանագրություններից շուրջ 700-ը հասել է մեզ: Վանի թագավորության գրական ժառանգությանը անդրադառնալիս անհրաժեշտ է հիշել, որ Մովսես Խորենացուց հետո վանտոսայան հնությունների առաջին հետազոտողն էր Ֆր. Էդ. Շուլցը: Նա առաջինն էր, որ 1827թ. ուսումնասիրեց և նկարագրեց Վանա ժայռը և արտանկարեց այնտեղ եղած սեպագիր արձանագրությունները: Ուրարտագիտությունը սկզբնավորվում է 1840թ., երբ հրատարակվեց Ֆր. Էդ. Շուլցի՝ Վանա լճի ավազանի հնություններին նվիրված գիրքը, այնուհետև, շարունակաբար եղան նորանոր հայտնաբերումներ, որոնք բազմապատկեցին Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների թիվը: Այսրկովկասում սեպագրերի հայտնաբերումը և դրանց նախնական առանց թարգմանության հրատարակությունը ստանձնել էին տեղի ուսումնասիրողները Գ. Տեր-Մկրտչյանը և Մ. Սմբատյանը: 1862թ. էջմիածնի եպիսկոպոս Մ. Սմբատյանը հայտնաբերեց Էլարի արձանագրությունը: 1863թ. Սևանի հարավային ափին հայտնաբերվեց Ծովինարի արձանագրությունը: Մ.Սմբատյանը 1869թ. «էջմիածին» ամսագրում սկսեց հրատարակել Այսրկովկասում գտնված արձանագրությունները, որոնցով երկար ժամանակ աշխատեցին արևմտյան ուսումնասիրողները: Հավաքված նյութերը հրապարակվեցին ուրարտական սեպագիր արձանագրություններին նվիրված առաջին համահավաքներում՝ կազմված Ա. Մորդտմանի, Ա.Սեյսի, Կ. Լեհման-Հաուպտի և Հ. Սանդալջյանի կողմից: Վերջին համահավաքները կազմել են Գ. Մելիքիշվիլին, Ֆ.Քյոնիգը, Ն.Հարությունյանը, Մ. Սալվինին:

Աշխատանքի առաջին և երկրորդ գլուխների համար կարևոր են բիայնական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում է Երիախի երկիրը կամ նրա հարևաններից որևէ մեկը: Գլխի բաժիններում, ըստ հերթականության, ժամանակագրական կարգով ներկայացված են ա. Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության այն հատվածները, որտեղ արքան խոսում է Երիախի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին, բ. Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության կրկնօրինակը համարվող Վանի Ս. Սահակ եկեղեցու սեպագիր կոթողը, գ. Կարսի վիլայեթի Հանակ շրջկենտրոնից ոչ հեռու գտնված սեպագիր արձանագրությունը, որը որոշ նմանություններ ունի Խորխորյան տարեգրության, Վանի Ս.Սահակ եկեղեցու սեպագրի և Արգիշտի I-ի

թողած Սարիղամիշի արձանագրության հետ, դ. Արզիշտիի՝ Սարիղամիշի, Սպանդարյանի, Մարմաշենի արձանագրությունները և Վանի թանգարանում պահպանվող ազաթե ուլունքներից մեկի արձանագրությունը՝ մանրամասն վերլուծություններով, Ե. Սարղուրի II-ի տարեգրության այն հատվածները, որտեղ արքան դարձյալ պատմում է Երիախի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին: զ. Ռուսա I-ի՝ Ծովինարի արձանագրությունը, որտեղ Երիախի երկրի անվանումը հանդես է գալիս «երկիր Երիանի» ձևով: Է. Ռուսա II-ի՝ Թոփրաք-կալեից հայտնաբերված կավե աղյուսակի սեպագիր տեքստի այն հատվածը, որում արքան խոսում է Իշկիգուլու երկրի թագաժառանգ Շագասաշթարային Մանա երկրի կառավարիչ նշանակելու մասին (հիարկե, խոսքը Մանայի մի փոքր հատվածի մասին է, որը նվաճվել էր Ուրարտուի կողմից):

Բացի սեպագիր արձանագրություններից՝ կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսացել Մովսես Խորենացու «Պատմություն հայոց», Ղևոնդ պատմիչի «Պատմությունը», Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը», Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնո» աշխատությունը, Հերոդոտոսի «Պատմությունը», Քսենոփոնի «Անաբասիսը», Ստրաբոնի «Աշխարհագրությունը»: Պատմիչները անդրադարձել են պատմական Հայաստանին (Արմենիա), Շիրակին, Կուժայրի-Գյունրի քաղաքին: Աշխատանքի երրորդ գլուխը գրված է տարածաշրջանում հնագիտական աշխատանքների արդյունքում ուսումնասիրված հուշարձանների և հայտնաբերված նյութերի քննության հիման վրա:

Գրականությունը: Երիախի երկրի պատմության ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն Ղևոնդ Ալիշանը, Ատրպետը, Թ. Թորամանյանը, որոնց աշխատություններում քննարկված են ինչպես Լճաշեն-մեծամորյան, այնպես էլ ուրարտական ամրոցները:

Հարցին անդրադարձել են նաև Ն. Ադոնցը, Գր. Ղափանցյանը, Ն. Հարությունյանը, Ս. Հմայակյանը:

Շիրակի հնագույն մշակույթին վերաբերող հնագիտական կարևոր ուսումնասիրություններից են Հ. Մարտիրոսյանի, Թ. Խաչատրյանի աշխատությունները: Ուշագրավ է Ռ. Բադալյանի աշխատությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է Շիրակի վաղ բրոնզեդարյան հուշարձանները, նյութական մշակույթը, տնտեսության հիմնական ձևերը: Քանի որ Շիրակի՝ Ք.ա. VIII-VI դդ. նյութական մշակույթը իր արմատներով կապված է ոչ միայն Շիրակի, այլև Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան մշակույթին, ապա ուշագրավ են Լ. Պետրոսյանի աշխատությունը, որում հեղինակը ներկայացնում է Ոսկեհասկի և Քեթիի «Քարոտ հողեր» դամբարանադաշտերի՝ երկաթի լայն տարածման (միջին և ուշ երկաթ) դարաշրջանի (Ք.ա. VIII-VI դդ.) հինգ դամբարանները, Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի «Հին Շիրակական (1977-1981թթ. պեղումների արդյունքները)» աշխատությունները, որտեղ ընդգրկված են Շիրակավանի III-I հազ. նորահայտ ամրոց-բնակատեղիի և երեք դամբարանադաշտերի ուսումնասիրության արդյունքները: Մեզ հետաքրքրող նյութերի թվագրության առումով առանձնահատուկ ուշադրության են արժանի Ա.Փիլիպոսյանի աշխատությունները: Մեթոդական առումով ուշագրավ է Հ. Ավետիսյանի և Ա. Բորխյանի կազմած դասագիրքը:

Հոդվածներից առանձնահատուկ ուշադրության են արժանի Եվ. Բայբուրդյանի, Հ. Մարտիրոսյանի, Բ.Պիոտրովսկու և Լ.Գյուլգալյանի, Ստ. Եսայանի, Գ.

Արեշյանի հողվածները: Ուշագրավ է 2013թ. լույս տեսած Յ. Խաչատրյանի, Ե. Եգանյանի կազմած «Շիրակը մշակույթի օրրան» կատալոգը:

Երիտխի երկրի ուսումնասիրության հարցում կարևոր է Շիրակի պատմամշակութային ժառանգությանը (ՇՊՄԺ), նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպումը Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից (1994-ից): Գիտաժողովի գիտական նստաշրջանների նյութերում հրապարակվել են Տ. Դալայանի, Բ.Երիցյանի, Ս.Յմայակյանի, Ս.Պետրոսյանի, Ա.Պետրոսյանի, Ա. Խուդավերդյանի, Ա. Փիլիպոսյանի, Ս.Տեր-Մարգարյանի և Ի.Ավագյանի՝ այս հարցին վերաբերող թեզերն ու հողվածները: Նույն կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականում հրատարակվել են նաև բավականին ուշագրավ նյութեր, որոնք նույնպես օգտագործված են աշխատանքում:

Ներկայացվող խնդիրը եղել և մնում է նաև ռուս պատմաբանների, լեզվաբանների, արևելագետների և հնագետների կողմից ուշադրության արժանացած հարցերից մեկը: 1862 թ. ռուսաստանցի հետազոտող Քեստները Գյումրուց 8 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Մարմաշեն գյուղի մոտ՝ Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհից ոչ հեռու, հայտնաբերեց Վանի արքա Արգիշտի I-ի արձանագրությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Էմիլ Ռյուլերի՝ Ալեքսանդրապոլի ամրոցի մոտ՝ «Չյոռնայա բաշնյա»-ից արևելք, կատարած պեղումների մասին հաշվետվությունը՝ ներկայացված կայսերական Ռուսաստանի հնագիտական հանձնախմբին, որտեղ հեղինակը հատուկ անդրադարձ է կատարում Մարմաշենի արձանագրությանը: Հարցի վերաբերյալ արժեքավոր են Բ.Պիոտրովսկու աշխատությունները, որոնցում հեղինակը խոսում է բիայնական և սկյութական մշակույթների՝ մեզ հետաքրքրող ընդհանրությունների ու փոխազդեցությունների մասին, Գ. Ծերեթելու աշխատությունը, որտեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է Սարիղամիշի՝ Արգիշտի I-ի թուղած արձանագրությունը:

Ուսումնասիրվող հարցը հետազոտության առարկա է դարձել նաև այլ երկրների պատմաբանների, ասուրագետների, լեզվաբանների, արևելագետների և հնագետների կողմից: Այս առումով հետաքրքիր են Յ. Յյուբշյանի աշխատությունը, որտեղ հեղինակը, ըստ պատմական սկզբնաղբյուրների, մանրամասն վերլուծում է հայոց տեղանունները:

Թեմայի համար կարևոր են Յ. Կելների հրատարակած ուրարտական գոտիների կատալոգը, Ս. Սալվինիի՝ ուրարտական մշակույթին նվիրված աշխատությունը և ուրարտական արձանագրությունների համահավաքները:

Թուրք ուսումնասիրողներից հիշատակենք Ա. Զիլինգիօղլուի՝ Այանիսի «Տաճարական համալիրին» վերաբերող հողվածը «Այանիս» I հողվածների ժողովածուում (համահեղինակ՝ Մ. Սալվինի) և Ա. Էրզեմի «Զավուշթեփե» մենագրությունը, որը վերահրատարակվել է Անկարայում 1998թ.: Զավուշթեփե՝ Հայկաբերդը կամ Ասպաշենը, Արևմտյան Հայաստանում գտնվող, Ք.ա. VII-VI դդ. թվագրվող խոշորագույն վանտոսայան հուշարձաններից մեկն է: Ուրարտական մշանավոր հուշարձաններից է Վանա լճի ափին գտնվող Այանիսը՝ հարուստ հնագիտական և վիճագրական նյութերով: Զավուշթեփեից և Այանիսից հայտնաբերված նյութերի վառ նմանօրինակներ հայտնի են Հայաստանի տարածքում պեղված վանտոսայան շատ հուշարձաններից:

Շիրակի հնագիտական ուսումնասիրության համար առանձնահատուկ դեր խաղացին և այժմ էլ խաղում են հայ-օտարերկրյա համատեղ արշավախմբերի

կատարած պեղումները: Առանձնահատուկ կերպով անհրաժեշտ է կանգ առնել Շիրակի Յոռոմ հուշարձանի պեղումների վրա: Յոռոմ ամրոցը առայժմ ուսումնասիրված միակ ուրարտական ամրոցն է Շիրակում, որի հնագիտական հետազոտության արդյունքները հրատարակված են մի շարք հրապարակումներով:

Շիրակի հնագիտական ուսումնասիրության հարցում մեծ նշանակություն ունեցավ 2007 թ. Ֆրանսիայում տպագրված կատալոգը, որում ուրույն տեղ են զբաղեցնում Շիրակի հնագիտական հուշարձանները, Սարմաշենի արձանագրությունը և հարցին վերաբերող հնագիտական գտածոները: Սույն կատալոգում զետեղված են հայ հնագետների՝ ֆրանսերեն թարգմանված գիտական մի շարք հոդվածներ՝ նվիրված Շիրակին և Էրիախի երկրին:

Աշխատանքի ներածության մեջ սկզբնաղբյուրներն ու գրականությունը ներկայացնելուց հետո տրվում է նաև Շիրակի հնագիտական ուսումնասիրության պատմությունը: Ներկայումս Շիրակի տարածքում գոյություն ունեն տարժանանակյա 2400 հուշարձաններ (վաղ քարեդարից մինչև ուշ միջնադար), որոնք գտնվում են պետության պահպանության ներքո:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, հավելվածից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, քարտեզներից և աղյուսակներից: Աշխատանքին կից տրված են քարտեզներ (կազմեցին՝ Ի. Ավագյան, Յ. Պետրոսյան), հատակագիծ (ճարտարապետ՝ Վ. Սկրտչյան), գրչանկարներ (նկարիչ՝ Թ. Հմայակյան) և լուսանկարներ (Ի. Ավագյան): Կազմված են քարտեզներ՝ «Շիրակի հնագիտական հուշարձանները», «Շիրակի ուրարտական և ուրարտական դարաշրջանի հուշարձանները» և «Էրիախի երկիրը VIII-VI դդ.»:

Աշխատանքին կից դրվել է հավելված, որում ամփոփված են պատմական Շիրակի և հարևան տարածքների մասին վկայող ուրարտական սեպագիր արձանագրությունների լատիներեն տեքստերը (տրանսլիտերացիա) և հայերեն թարգմանությունները:

Գլուխ I

Էրիախի ընդհանուր բնութագիրը

Աշխատության առաջին գլխի առաջին բաժնում ներկայացված է ուսումնասիրության առարկան հանդիսացող Էրիախի երկրի պատմաշխարհագրական ակնարկը, որը մասնավորեցվում է Հայկական լեռնաշխարհի պատմաշխարհագրական բնութագրի հիման վրա: Առաջին գլխի երկրորդ բաժնում տրվում է պատմական Շիրակի վարչական բաժանումը բիայնական տիրապետության դարաշրջանում: Գլխի երրորդ բաժնում ներկայացված է մեզ հետաքրքրող Վանի թագավորության և նրա կազմի մեջ մտած Էրիախի ազգագավառի համառոտ բաղաբնական պատմությունը: Գլխի չորրորդ բաժնում ներկայացված են Շիրակի բնակչությունն ու բնակչության սոցիալական կազմը Ք.ա.VIII-VI դդ. և դեմոգրաֆիական ու էթնիկ տեղաշարժերը: Առավելապես ուշագրավ են Արգիշտի I-ի, Սարդուրի II-ի արշավանքների ժամանակ կատարված էթնիկ տեղաշարժերը, որոնց արդյունքում Շիրակի ազգաբնակչության ստվար զանգվածներ հայտնվեցին Վանի թագավորության այլ շրջաններում: Գլխի հինգերորդ բաժնում ներկայացված է Էրիախի երկրի տնտեսությունը, որը

սերտորեն կապված է էթիոնյան համադաշնության և վանտոսայան հզորացող տերության տնտեսության հետ: Գլխի վերջին բաժնուն ներկայացված է էրիախի երկրի կրոնը էթիոնյան և վանտոսայան դիցարանների հենքի հիման վրա: Բնութագրված են տեղաբնիկների՝ Շարայի ցեղամիության՝ Ք.ա.VIII-VI դդ. Շիրակում բնակվող բնակչության ավանդական և փոխառված կրոնապաշտամունքային պատկերացումները:

Գլուխ II

Էրիախին՝ ըստ սեպագիր և մատենագրական սկզբնաղբյուրների

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացված են բիայնական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում է Էրիախի երկիրը կամ նրա հարևաններից որևէ մեկը: Գլխի բաժիններում, ըստ հերթականության, ժամանակագրական կարգով ներկայացված են Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության այն հատվածները, որոնցում արքան խոսում է Էրիախիի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին, Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության կրկնօրինակը համարվող Վանի Ս. Սահակ եկեղեցու սեպագիր կոթողը, Կարսի վիլայեթի Յանակ շրջկենտրոնից ոչ հեռու գտնված սեպագիր արձանագրությունը, որը որոշ նմանություններ ունի Խորխորյան տարեգրության, Վանի Ս.Սահակ եկեղեցու սեպագրի և Արգիշտի I-ի թողած Սարիղամիշի արձանագրության հետ, Արգիշտիի՝ Սարիղամիշի, Սպանդարյանի, Սարնաշենի արձանագրությունները՝ մանրամասն վերլուծություններով, Արգիշտի I-ի՝ Վանի թանգարանում պահպանվող սեպագիր արձանագրությամբ ազաթե ուլունքը, Սարդուրի II-ի տարեգրության այն հատվածները, որոնցում արքան դարձյալ պատմում է Էրիախիի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին, ապա Ռուսա I-ի՝ Ծովինարի արձանագրությունը, որտեղ Էրիախի երկրի անվանումը հանդես է գալիս «երկիր Էրիանի» ձևով, Ռուսա II-ի՝ Թոփրաք-կալեից հայտնաբերված կավե աղյուսակի սեպագիր տեքստի այն հատվածը, որտեղ արքան խոսում է Իշկիզուլու երկրի թագաժառանգ Շագաաշթարային Սանա երկրի կառավարիչ նշանակելու մասին:

Գլուխ III

Էրիախիի ուրարտական և ուրարտական դարաշրջանի հուշարձանները

Աշխատանքի երրորդ գլուխն ունի երեք ենթաբաժին, որոնցում ներկայացված են Շիրակի՝ Ք.ա.VIII-VI դդ. թվագրվող հուշարձանները (բնակավայրեր, դամբարաններ), հուշարձաններից հայտնի գտածոները և Դ. Կարանյանի հնագիտական նյութերի հավաքածուն: Շիրակի՝ Ք.ա.VIII-VI դդ. թվագրվող հուշարձանների թվում իր ուրույն տեղն է զբաղեցնում Գոռնի ամրոցը: Սանրամասն ներկայացված են նաև Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող տեղական մշակույթը ներկայացնող բնակատեղիներն ու ամրոցները: Երրորդ գլխի հաջորդ բաժնում ներկայացված են Շիրակի՝ Ք.ա.VIII-VI դդ. թվագրվող դամբարանադաշտերը և դամբարանները՝ հայտնի գտածոներով, որոնք բնակավայրերի նման բաժանվում են ուրարտական նյութերով դամբարանների (Գուսամագյուղի «Յեծյալ

ռազմիկի» դամբարան) և տեղական մշակույթը ներկայացնող համաժամանակյա դամբարանադաշտերի (Շիրակավան, Ոսկեհասկ, Քեթիի «Քարոտ հողեր»): Գլխուն հատուկ տեղ է հատկացված նաև Շիրակում հայտնաբերված պատահական գտածոներին, Հակոբ Կարանյանի «Լեռնիական 22» տարժամանակյա հավաքածուին և անհատական հավաքածուի երկու իրերին (49 ա և 49 բ), որոնց լուսաբանումը կարևոր է Շիրակի ուրարտական շրջանի մշակույթը ներկայացնելիս: Առանձնահատուկ ուշադրության են արժանի «Սև ամրոց» հնագիտական հուշարձանի ուրարտյան կառույցը (Ք.ա.VII-VI դդ.) և կառույցից պեղված նյութական մշակույթը բնորոշող մնացորդները:

Եզրակացություններ

Եզրակացությունների մեջ կատարված ուսումնասիրությամբ հնագիտական և արքայադափտական նյութերի հիման վրա եզրահանգումներ են արվել Էրիֆիի երկրի (Ք.ա.VIII-VI դդ.) պատմական զարգացման մասին, ցույց է տրվել այն նշանակությունը, որը կարող է ունենալ այս ուսումնասիրությունը ուրարտագիտության բնագավառում այսօր ընթացող գործընթացների պայմաններում:

Վանի թագավորությունը կազմավորվեց համեմատաբար արագ, ընդամենը մի քանի տասնամյակում: Վանի թագավորությունը Հայկական լեռնաշխարհը միավորեց մեկ միասնական քաղաքական միավորի մեջ և ստեղծեց միասնական մշակութային դաշտ: Կենտրոնի և ծայրագավառների միջև ամբողջացման և միավորման գործընթացները շատ խորը չէին ու չէին էլ կարող լինել ժամանակի սղության, տարածքի մեծության և էթնիկական անհամասեռության պատճառով: Այսինքն՝ տեղերում՝ ծայրագավառներում, կենտրոնի ազդեցությունը թույլ էր, երբեմն այն ընդհանրապես նվազագույն էր: Բացի սրանից՝ Ք.ա. IX-VIII դդ. դիտարկվում է մշակութային հակամարտություն միմյանց նկատմամբ՝ սկզբում վանեցիների, ապա և էթունցիների կողմից, հանգամանք, որն ուսումնասիրել են Գ.Տիրացյանը և Գ.Արեշյանը: Սակայն գալիս է այն պահը, երբ Վանի արքաների գերիշխանությունը տարածաշրջանում այնքան բնական էր դիտվում, որ Աշոցքում գտնվող Իշկիգուլու երկրի իշխանի գահաժառանգը /՝/ ծառայության է անցնում Ռուսա II-ի վարչակազմում՝ որպես Մանա երկրի փոխարքա:

Ք.ա. VII դ. սկիզբ առած ուրարտա-ասուրական դաշինքը խրախուսեց ուրարտական մշակույթի ու պետականության նոր վերելքը, իսկ Ասորեստանը, այս կերպ ամրապնդելով իր հյուսիսային սահմանների անվտանգությունը, հասավ իր քաղաքական հզորության գագաթնակետին: Ինչ վերաբերում է Վանի թագավորության արքաների հեռատես քաղաքականությանը, որի հետևանքը տնտեսաքաղաքական երկրորդ հզոր կենտրոնի ստեղծումն էր հյուսիսում, ապա այն իրեն, իրոք, արդարացրեց, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը: Բիայնական մշակույթի ուժեղ ազդեցությունը հյուսիսային ծայրագավառների՝ էթունիի հզոր համադաշնության մշակույթի վրա ակնհայտ է: Այս են ցույց տալիս Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող բազմաթիվ հուշարձանների և դամբարանների պեղումները, ինչպես նաև ուրարտական սեպագրերի առկայությունը այստեղ:

Չմայած էթունիի համառ դիմադրությանը՝ Վանի թագավորությունը ոչ միայն շարունակեց զավթողական քաղաքականությունը, այլև յուրացրեց և ընտելացրեց այս տարածքները՝ խոշոր միջոցառումներ կազմակերպելով:

Կառուցվում էին հզոր ոռոգիչ ցանցեր, հիմնադրվում էին խոշոր քաղաքներ ու ամրոցներ, ռազմավարչական ու տնտեսական կենտրոններ, որոնք գնալով սերտացնում էին կովկասյան տարածաշրջանի կապը հիմարևելյան, մասնավորապես՝ վանտոսայան մշակութային ուղեծրի հետ: Ոչ միայն վանտոսայան մշակույթն էր վերափոխում «տեղական» մշակույթները, այլև ակներև է «տեղական», մասնավորապես՝ հայկական մշակույթի ազդեցությունը ուրարտականի վրա, ինչը նշանակալի կերպով ազդել է ուրարտերենի և ուրարտական կրոնի, հետևաբար և մտածելակերպի վրա: Այս համագամանքը, անշուշտ, խորհել է տալիս, որ առնվազն Ք.ա. IX դ. Հայկական լեռնաշխարհում արդեն կար, գոյություն ուներ հայկական էթնոսը՝ բավական բարձր զարգացած մշակույթով, քաղաքական ու տնտեսական կյանքով: Ուրարտերենին հայերենից անցած հայկական հասկացությունները առնչվում են այնպիսի բնագավառներին, ինչպիսիք են երկրագործությունը, ռազմական արվեստը, ընտանիքը, կրոնը: Ուշագրավ է, որ այդ ազդեցությունը ակնառու է Ք.ա. IX դ.՝ հենց այն ժամանակներից, երբ կազմավորվել էր Վանի թագավորությունը. ակնհայտ է, որ հայկական տարրը ամենակզբից մասնակից է եղել պետության ստեղծմանը, և որ Վանի թագավորության ստեղծման գործին հայ էթնոսն է, որ օժանդակել է և հանդիսացել դրա կազմակերպիչ ուժերից մեկը:

Այս գործին, սկսած Ք.ա. VIII դ., մասնակից է դառնում Հյուսիսային համադաշնությունը՝ էթիունին, որի մեջ նշանակալից էր Շիրակի դերը: Հյուսիսի նվաճումը սկսվեց հենց այս տարածքներ կատարված արշավանքներով և մինչև Ք.ա. VI դ. ընկած ժամանակահատվածում: Վանի թագավորությունը թուլանալով սկսեց հենվել հյուսիսային ազգագավառների վրա՝ ջանալով իր տիրապետության ներքո պահել այս, թերևս նաև հայերով բնակեցված տարածքները: Ուրարտում քաղաքական, մշակութային հակամարտության մեղմացումը ուղեկցվում էր էթնիկական հանդուրժողականությամբ, որը նպաստեց լեռնաշխարհի տարեթնիկ բնակչության էլ ավելի մերձեցմանը, որի արդյունքը հայտնի է ըստ Ստրաբոնի հիշատակության. Ք.ա. II դ. Մեծ Հայքի բնակչությունն արդեն խոսում էր մեկ ընդհանուր լեզվով:

1. Այս ամենով հանդերձ՝ Հյուսիսային համադաշնության և նրա կազմում ընդգրկված երկրների պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը Ք.ա. VIII-VI դդ. շատ կարևոր խնդիր է և պայմանավորում է այդ մշակութային կապը, որը դարակազմիկ է համարվում և կապում է Հայկական լեռնաշխարհի պատմության ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան փուլը (Լճաշեն-մեծամորյան մշակույթ) հելլենիստականին:

Աշխատանքում առանձնահատուկ ուշադրության են արժանացել.

2. Ք.ա. VIII-VI դդ. պատմական Շիրակի տարածքում ձևավորված և Հյուսիսային համադաշնության մեջ կարևոր դեր խաղացող Էրիախիի և նրա դաշնակիցների քաղաքական պատմության, տնտեսության, պատմական Շիրակի վարչական բաժանման, կրոնի, բնակչության կազմին առնչվող խնդիրները:

3. Այս ամենի մասին պատկերացում ունենալու համար անցկացվել է սեպագիր և մատենագիր անհրաժեշտ աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրություն, մասնավորապես՝ Շիրակի տարածքում հայտնի սեպագիր արձանագրությունների, Արգիշտի I-ի և Սարգուրի II-ի տարեգրությունների այն հատվածների, որոնցում կարևոր տեղեկություններ կան պատմական Շիրակի տարածքում ձևավորված ցեղերի և երկրների մասին: Սեպագիր աղբյուրների ու-

սումնասիրության ընթացքում Հայաստանում շրջանառության մեջ դրվեց Վանի թանգարանում պահպանվող և 2012թ. առաջին անգամ հրատարակված ազաթե ուլունքի սեպագիր արձանագրությունը:

Ուսումնասիրության հիման վրա կազմվել է հավելված, որտեղ գետեղվել են ուրարտական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են պատմական Շիրակի տարածքում և հարևանությամբ ձևավորված երկրները, ինչպես նաև քարտեզ՝ «Երիախի երկիրը Զ.ա. VIII-VIդդ.», որտեղ ներկայացվել են ուրարտական դարաշրջանում պատմական Շիրակի ու հարևան տարածքների վարչական բաժանումը, վարչական կենտրոնները և այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են այդ երկրներն ու քաղաքները: Այդ երկրներն էին Անիշթերզան, Գուլութախին, Կուլիանին, Կուրիանին, Երիախին և Աշտուխին:

Դ. Աշխատանքում տրված են այն ճանապարհները, ուղղությունները, որոնցով ուրարտացիները արշավել են այս երկրների և նրանց դաշնակիցների վրա: Վերլուծվել է Էթիունի համադաշնության հետ ուրարտացիների կնքած «խաղաղության» պայմանագիրը:

Ե. Շիրակի տարածքում ձևավորված այս վեց իշխանությունների մեջ գերակշռող դեր է խաղում Երիախին, որը կառավարվում էր տեղական հարստության կողմից: Այսպիսով, մենք գործ ունենք «Մեծ» Երիախիի հետ, որը վեց իշխանությունների համադաշնություն էր և իրենից ներկայացնում էր թագավորություն, և «Փոքր» Երիախիի հետ, որը կարողացել էր իր շուրջը համախմբել մյուս իշխանությունները:

Զ. Ըստ բիայնական գրավոր աղբյուրների՝ այս դաշինքից դուրս էր մնում հյուսիսային Շիրակի տարածքում ձևավորված Իշկիզուլու երկիրը, որի՝ Զ.ա. VIII-VI դդ. պատմությունն ու նյութական մշակույթը սերտորեն կապված են Երիախիի հետ: Նորովի է ներկայացվել Արդինի քաղաքի «Աշտիուզին» տանելու պատճառով առաջացած կրոնաքաղաքական ճգնաժամը:

Է. Այսպիսով, ակներև է դառնում, որ որքան էլ պատմական Շիրակի տարածքում հզոր և գերակշռող էր Երիախիի իշխանությունը, այնքան էլ այդ հզորությունը կախված էր հարևան ցեղերի ու երկրների հետ նրա ձևավորած դաշինքից: Երիախիի թագավորությունը ինքը մասն էր Լուշա-Քաթարգա-Վիտերուխի միավորման, որն իր հերթին բաղկացուցիչն էր Էթիունիի: Ի վերջո, համադաշնության սկզբունքով միավորված ցեղերից կազմված Էթիունի Յյուսիսային համադաշնությունը Բիայնիլիի կարևոր հակառակորդներից էր Զ.ա. VIII-VII դդ.:

Ը. Այս համադաշնության և Բիայնիլիի միջև ծավալված համառ պայքարի արդյունքում գերիշխողը դարձավ Վանի թագավորությունը: Վանի արքաների հեռատես քայլերից մեկը նվաճված Էթիունիում վերահաստատվելն ու այն թագավորության երկրորդ կենտրոնը դարձնելն էր:

4. Օգտագործելով Շիրակի՝ Զ.ա. VIII-VI դդ. թվագրվող հնագիտական հուշարձաններից պեղված նյութերը կազմել ենք Շիրակի հնագիտական հուշարձանների տարածույթը, հուշարձանների և նյութերի տիպերն ու պարբերացումը բնորոշող աղյուսակներ ու դիագրամներ, այդ հուշարձանները համադրել և ժամանակագրորեն համեմատել ենք Արարատյան դաշտի, Սևանա լճի ավազանի, Արագածոտնի մարզի հնագիտական հուշարձանների հետ,

5. Ուսումնասիրության կարևոր հիմնախնդիրներից է Երիախիի և հարևան երկրների «հոգևոր» ու «նյութական» մշակույթի ուսումնասիրությունը ըստ հնագիտական նյութերի՝ բնակավայրերի և դամբարանների:

Ա. Բնակավայրերից առանձնահատուկ ուշադրության են արժանացել Սարմաշենի, Գուսանագյուղի, Տիրաշենի, Վարդաբաղի, Շիրակավանի, Գոռոմի, Ագատանի (Բենիամին II), Գյումրու «Սև ամրոց» և «Մսի կոմբինատի» հնագիտական հուշարձանները:

Բ. Դամբարաններից՝ Արթիկի, Քեթիի «Քարոտ հողեր», Ոսկեհասկի, Շիրակավանի, Ագատանի, Սարատակի, Կարմրաքարի, Զացիկի, Գուսանագյուղի դամբարանադաշտերը: Ք.ա. VIII-VI դդ. հուշարձանները բաժանել ենք երկու խմբերի՝ ուրարտացիների կողմից Լճաշեն-մեծամորյան մշակույթին պատկանող ամրոցների հիմքի վրա ստեղծված բերդաքաղաքներ (Գոռոմ), և համաժամանակյա, բայց տեղաբնիկների մշակույթը ներկայացնող մյուս հուշարձանները՝ Շիրակավան, Ագատան, Բենիամին, Գյումրու «Սև ամրոց», Լենինականի «Մսի կոմբինատ»: Այսպիսով, այս ամենի հիման վրա հնարավոր է դառնում հստակ պատկերացում կազմել հյուսիսային՝ էթիունի համադաշնության մեջ մտած և պատմական Շիրակի մասը կազմող Էրիախի, Գուլութախի, Անիշթերգա, Կուլիանի, Կուրիանի, Աշթուխի հիշխանությունների՝ Ք.ա. VIII-VI դդ., պատմության ու մշակույթի մասին:

Գ. Կազմվել է Շիրակի միջին երկաթեդարյան հնագիտական հուշարձանների վիճակագրական սանդղակը, ըստ որի՝ 19 հուշարձաններից միայն մեկն է (Գոռոմ) ուրարտական (5,26%), մյուս 18-ը (94,7%) ուրարտական դարաշրջանի են:

Դ. Կազմվել է Շիրակի միջին երկաթեդարյան հնագիտական հուշարձանների տիպերի վիճակագրական սանդղակը, ըստ որի՝ 32 հուշարձաններից 4-ը ուրարտական արձանագրություններ են (12,5%), 16-ը (50%)՝ դամբարանադաշտեր, 7-ը (21,87%)՝ ամրոցներ, 5-ը (15,63%)՝ բնակատեղիներ:

Ե. Արդյունքում քննության առարկա են դարձել առկա նյութերը, որոնք առնչվում են ճարտարապետության, խեցեգործության, թաղման ծիսակարգի, հնաբուսաբանության, հնակենդանաբանության, հնամարդաբանության և այլ տվյալներին: Համեմատելով հետուրարտյան ճարտարապետությունը վաղ երկաթեդարյան ճարտարապետության հետ՝ նկատելի են դառնում որոշ փոփոխություններ.

Ա. Շարունակում է գոյատևել ավանդական շինարարական համալիրը՝ գլխատունը, սակայն ուրարտական ազդեցությամբ ձևավորվում են սյուներով դահլիճները (սյունազարդ դահլիճ և խարիսխների հետքերով գոմեր, գլխատներ Գոռոմում, Շիրակավանում, Բենիամինում, «Սև ամրոցում»), որոնք միջանկյալ օղակ են ուրարտական առանձնատների կենտրոնական միջուկը հանդիսացող սյունազարդ դահլիճների և հայկական ամտիկ ժամանակաշրջանի տնաշինության միջև: Արի-հացահատիկային շտեմարանների կառուցումը՝ Գոռոմում, Բենիամինում /%/. նմանօրինակը պեղված է Արգիշտիխնիլիում:

Բ. Համեմատելով հետուրարտյան խեցեղենը վաղ երկաթեդարյան խեցեղենի հետ՝ կտեսնենք մի շարք փոփոխություններ, որոնք հետևանք են վանտոսայան մշակույթի ազդեցության: Ձարգանում է փայլեցված կարմիր խեցեղենի մշակույթը («Սև ամրոց», «Լենինական 22», Բենիամին, Շիրակավան): Փայլեցված կարմիր խեցեղենին զուգահեռ հետուրարտյան հուշարձաններում շարունակում է հանդիպել երկաթեդարյան խեցեղենին բնորոշ խեցեղենը (Բենիամինի պալատական համալիրին բնորոշ է փայլեցված կարմիր խեցեղենը, մինչդեռ նույն հուշարձանի տնտեսական կառույցներում գերիշխում է երկաթեդարյանը): Ի հայտ են գալիս կանթերի նոր ձևեր (Շիրակավան, «Սև ամրոց», Լենինական 22): Մեծանում են փայլեցունով արված, պրոտոմաներով օժտված կենդա-

նակերպ անոթները (Շիրակավան, Բենիամին), որոնք կարող են լինել պտյակների նախածներ: VIII դ. ի հայտ են գալիս վանտոսայան մշակույթին բնորոշ փայլեցված սակերևույթով ալ քրեղանները (Գուսանագյուղ) և կարասները (Շիրակավան), որոնք լայն տարածում են գտնում հետուրարտյան շրջանում:

Գ. Ուշագրավ են այն փաստերը, որոնք վկայում են ուրարտական զարդարվեստի՝ տեղական՝ էթիունյան զարդարվեստի վրա ունեցած ազդեցության մասին: Խոսքը մասնավորապես «մալթյան խաչի» ներմուծումն է Շիրակի տեղական մշակութային աշխարհի, ինչի վկայությունն են Սպանդարյանի և Շիրակավանի գոտիների վրա արված մալթյան խաչերը: Կարիճի պոչ և ութտնուկ հիշեցնող, թռչնի ճանկեր ունեցող առասպելական կենդանիների և մալթյան խաչերի ներմուծումը մեզ համար հիմք է հանդիսացել նյութը թվագրել Ք.ա. IX-VIII դ.: Ջարդարվեստում կատարված փոփոխությունների մասին են վկայում Շիրակի անտիկ հուշարձանների շերտերում հանդիպող օձագլուխ ապարանջանները (Բենիամին): Կոյաբզեզանման ուլունքների առկայությունը Ք.ա. VII դ. թվագրվող դամբարանում (Յացիկ), ինչը վկայում է եգիպտա-ուրարտական փոխառնչությունների մասին:

Դ. Թաղման ծեսի հետ կապված՝ հետաքրքիր է այն հանգամանքը, որ ինչպես Արգիշտիիսիլիում և Կարմիր բլուրում, այնպես էլ Շիրակում, մասնավորապես՝ «Սև ամրոցում» և Ազատում, ավելի ուշ՝ Ք.հ. I-III դդ., թաղումները կատարվել են ուրարտական կառույցի պատերի մեջ, և բացառված չէ, որ սա պատահական երևույթ չէ, այլ կատարվել է ինչ-որ նկատառումներից ելնելով: Նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ «Սև ամրոցում» վաղ բրոնզեդարյան մեկ և ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան մի շարք թաղումներ կատարվել են վաղ բրոնզեդարյան բնակատեղիի շինությունների և պատերի մեջ նույնպես: Գյումրու «Սև ամրոց» բազմաշերտ և տարժամանակյա հնագիտական հուշարձանի բնակատեղիի շերտագրությունը, բնակատեղիի և դամբարանադաշտի պարբերացումը և հնագիտական ուսումնասիրության արդյունքում պեղված իրերի համառոտ նկարագրությունը բերված են «Սև ամրոց» հնագիտական հուշարձանի ժամանակագրական սանդղակում: Ինչ վերաբերում է Յ.Կարանյանի «Լեւինական 22» հավաքածուին, ապա 2013թ. մայիսին Գյումրու «Ճերմակ» հիվանդանոցի մոտ ջրագծի անցկացման ժամանակ բացվել են Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող դամբարաններ, ինչը վկայում է այն մասին, որ Կարանյանի հավաքածուն դարասկզբին նույն հիվանդանոցի՝ այս տարածքում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ է հայտնաբերվել: Միջնադարյան իրերի առկայությունը բացատրվում է նրանով, որ խաթարվել են միջնադարյան բնակատեղիի շերտերը, մանավանդ, որ «Ճերմակ» հիվանդանոցից քիչ հեռու գտնվում է Կունյարի միջնադարյան բնակատեղին, և քաղաքի այս տարածքը, մտնելով ԿԱԹ-ի մեջ, իրենից ներկայացնում է բազմաշերտ հնագիտական հուշարձան: Քանդվել են նաև միջնադարյան շերտի տակ եղած երկու /?/ տարժամանակյա դամբարաններ, որոնք կարելի է թվագրել Լճաշեն-Մեծամորյան մշակույթով (I-V փուլեր և VI փուլ): Վերջինս՝ VI փուլը համապատասխանում է միջին երկաթի դարաշրջանին (Ք.ա. VIII-VII դդ.), և դրանով է բացատրվում ուրարտական և ուրարտական ազդեցությամբ պատրաստված իրերի առկայությունը հավաքածուի մեջ: Յավաքածուի իրերի հիման վրա կազմվել է վիճակագրական սանդղակ:

7. Հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված իրողության վերլուծությունը ուսումնասիրության այժմյան մակարդակում, Բ.ա. VIII-VI դդ. առումով, տալիս է հետևյալ պատկերը:

Ա. Շիրակում (Երիախի) ձևավորվում է մեկ խոշոր ուրարտական կենտրոն՝ Հռոռնի բերդաքաղաքը: Սեկ այլ նման կենտրոն Շիրակի տարածքում հայտնաբերված չէ: Հռոռնից եկող ազդակներն են, որ մենք հաստատագրում ենք Շիրակում պեղված այլ հուշարձաններում՝ դիտարկելով բուն վանտոսայան նյութեր և որոշակի ազդեցություն տեղական մշակույթի կոնկրետ նյութերի վրա: Ազդեցության ցայտուն օրինակներ են գտնվել: Սակայն Գյումրու «Սև ամրոցի» ուրարտական շինության, Շիրակավանի, Ագատանի, Հայկաձորի ուրարտական դարաշրջանի ամրոցներում ուրարտական նյութերի առկայությունը վկայում է այն մասին, որ եղել են նաև ոչ մեծ ամրոցներ, որոնց վրա հենվել է ուրարտական գերիշխանությունը:

Բ. Այս իրադրությունը քիչ այլ է, քան այն, ինչ մենք հաստատագրում ենք Ազա երկրում և Սևանա լճի ավազանում: Ազա երկրում, որ տարածքով ավելի ընդարձակ չէր Երիախիից, մենք հաստատագրում ենք երեք խոշոր ուրարտական կենտրոններ՝ Թեյշեբախի, Արգիշտիխի, Էրեբունի: Սևանա լճի ավազանում գրեթե նույն իրավիճակն է. դիտարկվում են չորս խոշոր կենտրոններ՝ Ծովակ, Ծովինար՝ «Թեյշեբա աստծո քաղաք», Գավառ՝ «Խալդ աստծո քաղաք» և Լճաշեն, որոնց մատույցները ամրացված են եղել ավելի փոքր ամրոցներով, ինչպիսին է «Խալդիի քաղաքից» (Գավառ) ոչ հեռու գտնվող Ամվույտի դաշտի ամրոցը:

Գ. Այս իրադրությունը վկայում է այն մասին, որ երեք ազգագավառների համեմատությամբ Երիախիում ուրարտական ազդեցությունը ավելի թույլ է եղել, և Երիախի երկիրը՝ համադաշնություն, Վանի թագավորության կազմում պահպանել է իր ինքնորոշումը մինչև Վանի թագավորության անկումը:

Դ. Այս երևույթը պարզաբանելու համար նաև կազմվել են քարտեզներ, վիճակագրական սանդղակներ և աղյուսակներ, որոնցում հանգամանորեն ներկայացվել են Շիրակի՝ ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան ու միջին երկաթեդարյան հուշարձանները և հուշարձանների պարբերացումը, մշակութային փուլաբաժանումը և տիպաբանությունը: Հուշարձանները դասակարգվել են ըստ տիպերի՝ բնակատեղիներ, դամբարանադաշտեր, ամրոցներ, արձանագրություններ, քարայրեր: Վերջիններս գտնվում են մյուս հուշարձանների հարևանությամբ, սակայն լիարժեք ուսումնասիրված չեն: Պայմանականորեն առանձնացվել են նաև պատահական գտածոները: Կազմվել է աղյուսակ, որում տրվել են Շիրակի, Արարատյան դաշտի, Արագածոտնի, Սևանի ավազանի՝ ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան և միջին երկաթեդարյան հուշարձանների պարբերացումը և մշակութային փուլաբաժանումը, ցույց է տրված Շիրակի հուշարձանների դիրքը Արարատյան դաշտի, Արագածոտնի, Սևանի ավազանի հուշարձանների համեմատությամբ: Քարտեզ 2-ում ներկայացված են Շիրակի տարածամասկյա հնագիտական հուշարձանները, քարտեզ 3-ում՝ Շիրակի ուրարտական և ուրարտական դարաշրջանի հուշարձանները:

Ե. Հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում հետազոտված նյութը մեզ թույլ չի տալիս գտնել հիմքեր, որոնք բնորոշեն Շիրակը՝ որպես առանձին ազգագավառ, չնայած ճիշտ հակառակ երևույթ է դիտվում սեպագիր աղբյուրները և պաշտամունքը ուսումնասիրելիս:

Զ. Նյութական մշակույթի առումով կարող ենք հաստատագրել այն, որ թե՛ ուրարտական հուշարձաններում, թե՛ նյութական արժեքներում վանտոսայան նյութերը Շիրակում անհամեմատ քիչ են պեղված: Էլ ավելի փոքր տոկոս են կազմում փոխազդեցության արդյունք հանդիսացող իրերը: Դա արտացոլված է նաև վիճակագրական սանդղակներում:

Է. Վիճակագրական տվյալները մշակելիս, բացի Հոռոմի հնագիտական հուշարձանից, օգտագործվել են Շիրակի՝ Բ.ա. VIII-VI դդ. թվագրվող ամրոցներից, բնակատեղիներից և դամբարանադաշտերից հայտնի ուրարտական և ուրարտական ազդեցությամբ պատրաստված խեցեղենը և մետաղյա իրերը: Այսպիսով, Շիրակի միջին երկաթեդարյան հուշարձաններից հայտնի 152 ամբողջական անոթներից և խեցաբեկորներից միայն 28-ը (18,4%) ուրարտական են, 20-ը (13,2%) պատրաստված են ուրարտական ազդեցությամբ, 104-ը (71,7%) պատրաստված են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի (I-V փուլեր) ավանդույթներով: Մետաղյա 136 իրերից 30-ը (22%) ուրարտական են, 22-ը (16,2%) պատրաստված են ուրարտական ազդեցությամբ, 1-ը (0,74%) կիմերասկյութական է, 83-ը (61%) պատրաստված են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի (I-V փուլեր) ավանդույթներով: Ընդհանուր տվյալներն են. 288 իրից 58-ը ուրարտական իրեր են՝ 20,06%, 42-ը՝ փոխազդեցությունների արդյունք են և կազմում են 14,53%, 1-ը կիմերասկյութական իր է՝ 0,35%, տեղական մշակույթին բնորոշ 187 իրեր՝ 65,39%:

Այսպիսով, Շիրակը՝ որպես առանձին ազգագավառ, առանձնանում է հիմնականում գրավոր սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ, ըստ որոնց՝ այստեղ բնակվում էին ցեղեր, որոնք ունեին հայկական (Շարայի գարմեր), խուռի-ուրարտական, ինչպես նաև իրանական, թրակափոշյուգիական (սարապարներ), կիմերական ծագում: Չնայած ուրարտացիների տեղահանման քաղաքականությանը՝ մինչև վերջ էլ նրանք էին կազմում Շիրակի բնակչության հիմնական տարրը՝ ի տարբերություն Ազա երկրի, որի բնակչությունը էապես փոխվեց Բ.ա. VIII դ. կազմակերպված եթնիկ տեղաշարժերի հետևանքով:

Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատանքները

1. Ավագյան Ի. Է., «Սև ամրոց» հուշարձանի դամբարանադաշտը, «Հայաստանի հնագույն մշակույթը»-3, Տելեմակ Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, «Մուղնի» հրատ, Եր, 2003, 154 էջ, էջ 128-134:

2. Ավագյան Ի. Է., Հակոբ Կարանյանի մի հնագիտական հավաքածուի մասին, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2007, 301 էջ, էջ 34-40:

3. Ավագյան Ի. Է., Պատահական գտածոների հավաքածու Լեհինականից, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին, Նյութերի ժողովածու, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Գյումրի, «Դպիր» հրատ., 2007, 544 էջ, էջ 155-159:

4. Ավագյան Ի. Է., Էրիախի երկրի տնտեսությունը, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական միջազգային ութերորդ գիտա-

կան նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Եր., 2010, 312 էջ, էջ 128-134:

5. Ավագյան Ի.Է., Կրոնապաշտամունքային պատկերացումները Շիրակում Զ.ա. VIII-VI դդ., Գյումրու մանկավարժական ինստիտուտի` Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրի 20-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., «Վան Արյան» հրատ., 2011, 572 էջ, էջ 132-136:

6. Ավագյան Ի.Է., Ճանապարհները Երիախի երկրի, Գյումրու մանկավարժական ինստիտուտի` Հայաստանի Հանրապետության Անկախության 20-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2012, 520 էջ, էջ 320-325:

7. Ավագյան Ի.Է., Շիրակի երկրագործությունը և ամասնապահությունը Զ.ա. VIII-VI դդ., Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի` ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյակին նվիրված «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, «Դպիր» հրատ., Գյումրի, 2012, 320 էջ, էջ 280-284:

8. Ավագյան Ի.Է, Շիրակի վարչական բաժանումը Զ.ա. VIII-VI դդ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ XV, 2012, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ39-47:

9. Ավագյան Ի.Է., Երիախի երկրի կրոնը, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ XVI, 2013, Գյումրի, 2013, էջ 63-71:

10. Ավագյան Ի.Է., Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2015, 77 էջ:

РЕЗЮМЕ АВАГЯН ИНГА ЭДУАРДОВНА СТРАНА ЭРИАХИ (VIII-VI ВВ ДО Р. Х.)

Историки Древнего Мира называют Армянское нагорье и Армению перекрестком дорог. Это понятие может охарактеризовать не только Армянское нагорье и Армению, но и Переднюю Азию, которая, благодаря своему географическому положению, всегда привлекала взоры историков, археологов, ассириологов, арменоведов, которые стремились и ныне желают исследовать разнообразные памятники данной территории, чтобы составить цельное представление о переднеазиатской культуре. Важную роль в истории Передней Азии играет дальнейшее изучение вопросов, связанных с государством Урарту (Ванское царство) и урартской культурой. Важна значимость Ванского царства и ценность урартской культуры в свете Всемирной истории, а также та роль, которую это государственное образование сыграло в истории формирования армянского народа. Ванское царство является тем связующим звеном, между государственными образованиями Армянского нагорья, которые существовали до и после падения Ванского царства. В связи с этим надо глубоко изучить историю и культуру Ванского царства, а также в отдельности историю и культуру тех стран и племенных объединений, которые в IX-VI вв. входили в состав Ванского царства. Некоторые из этих стран находились на территории и по соседству с историческим Шираком, территория которого почти соответствует территории упоминавшейся в

урартских клинописных текстах страны Эриахи. Для изучения истории и культуры этой страны и сопредельных территорий необходимо изучить первоисточники и материальную культуру.

Тема диссертации: всестороннее изучение историко-географического местоположения, административное деление, политическая история, экономика, население, религия страны Эриахи. В работе Страна Эриахи представлена в свете урартских клинописных текстов и письменных источников. Детально изучается урартская культура и культура местных племен (VIII-VI вв. до р.Х.). Научная новизна темы заключается в том, что впервые подробно представляется монографическое изучение одной из провинций Ванского царства-страна Эриахи, сведения о которой разбросанны во многих первоисточниках и по всей исторической литературе.

Основная цель работы-собрать, изучить и обобщить все донные существующие археологические материалы, клинописные тексты, письменные источники, летописи по теме.. Составить карты Ширака в VIII-VI вв до р.Х. Работа в основном содержит период VIII-VI вв. до р.Х. Данная периодизация соответствует периоду покорения страны Эриахи Ванским царством. В хронологические рамки темы входят также те урартские клинописные надписи VIII-VI вв. до р. Х., которые так или иначе относятся к стране Эриахи, археологические материалы этого периода. Кроме этого, в хронологические рамки диссертации входит ряд до-урартских и послеурартских событий и фактов, которые облегчают и дополняют изучение нашей темы. Диссертация обсуждена на заседании Отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Работа состоит из введения, трех глав, заключения и приложений. В приложении даны таблицы материалов, список использованной литературы и сокращений, карты Ширака с местоположениями археологических памятников, карта страны Эриахи с обозначением урартских клинописных памятников, план археологического памятника «Сев амроц» («Черный форт»). Особую часть приложения составляет отделение, где собраны урартские клинописные тексты, содержащие сведения относительно исторического Ширака и сопредельных территорий.

В введении дается общая характеристика работы, обосновывается ее актуальность, цель и задачи, научная новизна, дается характеристика методов работы, а также практическое значение изучаемого материала.

В первой главе работы представлены: историко-географический обзор исторического Ширака, административное деление исторического Ширака в VIII-VI вв. до р. Х., краткий исторический обзор страны Эриахи и государства Урарту, население и демографическое расселение и этнические переселения, экономика, религия, культы и вероисповедание страны Эриахи.

Во второй главе представлены и изучены те урартские клинописные тексты, которые содержат информацию о стране Эриахи и сопредельных территориях. В хронологическом порядке представлены и изучены отрывки Хорхорской летописи Аргишти I и дубликаты летописи -две надписи из Вана и надпись из Ханака, а также надписи из Сарькамышы, Спандаряна, Мармашена, оставленные Аргишти I, отрывки из летописи Сардури II (Хазине-Капуси), клинописный текст Русы I из селения Цовинар и клинописная табличка Русы II из Топрах-кале.

В третьей главе изучены и представлены археологические памятники исторического Ширака VIII-VI вв. до р. X. и археологические материалы из этих памятников. Глава разделена на три части. В первой части третьей главы рассмотрены и изучены поселения и крепости Ширака VIII-VI вв. до р. X. Следует остановиться на археологическом памятнике Ором, который является пока единственной изученной урартской крепостью Ширака, другие же одновременные памятники Ширака являются наследием местных аборигенов, но были использованы урартами в качестве плацдарма при покорении севера Армянского нагорья. Так же следует остановиться на материалах, полученных во время раскопок разновременного памятника «Сев амроц», где изучена комната, которая датируется урартским периодом. Во второй части третьей главы рассмотрены и изучены погребения Ширака VIII-VI вв. до р. X.

В заключениях приводятся аргументы и выводы по теме. Автор на основе письменных источников, урартских клинописных текстов и археологических исследований делаются заключения относительно исторического развития страны и конфедерации Эриахи, указывается на то значение, которое данное исследование может иметь в сфере развития урартологии как отдельного звена науки, а также в среде воздействия новых тенденций истории Передней Азии.

SUMMARY

Inga Avagyn

The Land of Eriakhi in the VIII-VI B.C.

Sources of the Ancient World call the Armenian uplands and Armenia an intersection of the world roads. An important role in the history of the Near East plays further studying of the questions which are connected with the state of Urartu-Van Kingdom and Urartu culture. The importance of Van Kingdom and the value of Urartu culture in the World history and also the role that this state union played in the history of the Armenian nation is very significant. The Kingdom of Van is the link which provides communication between the state unions of the Armenian uplands which existed before and after falling of Van Kingdom. In this regard it is necessary to study the history and art of Van Kingdom and it is also necessary to study separately the history and art of those countries and tribal unions which were the part of Van Kingdom in the IX-VI centuries. Some of these countries were situated in the territory and in the neighbourhood of historical Shirak which is the territory that almost corresponds to the territory of Eriakhi Land mentioned in urartu cuneiform scripts. For studying the history and culture of this country and adjacent territories it is necessary to study original sources and material culture.

Thesis: comprehensive study of the historical geographic location, administrative division, political history, economy, population, religion of Eriakhi Land. The Land of Eriakhi is presented in the light of cuneiform scripts and original sources. Urartu art and the art of local tribes is studied in detail in VIII-VI B.C. Scientific novelty of the subject is that one of the provinces of Van Kingdom i.e. the Land of Eriakhi is studied in detail for the first time, data about which are scattered about all the historical literature.

The work generally contains the period of the VIII-VI centuries B.C. this periodization corresponds to the period of conquest of Eriakhi country by the Van Kingdom. The work consists of the introduction, three chapters, the conclusion and appendices: In the appendix are given tables of the materials, the list of the used literature

and abbreviation, maps of Shirak with locations of archaeological monuments, the maps of the Land of Eriakhi with designation of urartu cuneiform writing, the plan of the archaeological monument The Black Fortress. A special part of the appendix makes the section where urartu inscriptions are collected, which contains information about historical Shirak and its adjacent territories.

In introduction the general characteristic of work is given, its urgency, the purpose and tasks scientific novelty, the characteristic of work methods and also practical value of the studied material.

In chapter one (1) are presented:

a) Historical and geographical review of Historical Shirak which is presented against the historical and geographical review of the Armenian uplands.

b) Administrative division of historical Sirak in the VIII-VI centuries B.C., which was the part of Eriakhi.

c) Short historical review of the country of Eriakhi and Urartu Kingdom. d) The population and demographic settlement and ethnic resettlements in the result of which the population of Shirak, Eriakhi confederations removed to other parts of Urartu Kingdom.

e) Economy of Eriakhi.

f) The religion, culture, beliefs of the Land of Eriakhi are presented in the basis of religions of Van Kingdom and Etiuni's confederation.

In chapter two (2) the urartu cuneiform writings which contain information about Eriakhi Land and its adjacent territories are presented and studied. In chronological order are presented and studied fragments of Khorkhor chronicle of Argishti I and the chronicle duplicates, two inscriptions from Van and an inscription from Hanak, and also inscriptions from Sarighamish, Spandaryan, Marmashen which were left by Argishti I, fragments from Sarduri II chronicle (Hazine-Kapusi), cuneiform writing of Rusa I from Tsovinar settlement and cuneiform tables of Rusa II from Toprakh-Kalais.

In chapter three (3) are studied and presented archaeological monuments of historical Shirak of VIII-VI B.C. and also archaeological materials from these monuments.

The chapter is divided into three parts. In the first part of chapter 3 are considered and studied towns and fortresses of Shirak. Pay attention to the archaeological monument of Horom, which is now Shirak's unique urartu fortress. Shirak's other modern monuments are the heritage of local aborigenals but they were used by the urartu people as a base when conquering the North of the Armenian uplands. One should also look through the materials which were obtained during excavation of the monument "The Black Fortress" where is studied the part of the room dated from urartu period.

In the second part of chapter 3 are considered and studied burials of Shirak territory which were brought together by Hakob Karanyan (Karanov) and were presented to the History Museum (the collection is stored under inventory number Leninakan 22 and private collection 49 a and 49 b).

In the conclusion are given arguments and facts, conclusions of the authors on the subject. The author gives conclusion of historical development of the Land and confederation of Eriakhi on the base of original sources, urartu cuneiform scripts and archaeological researches pointing out the value this research can have in the sphere of development of urartology as a separate link of assiriology and also in the sphere of influence of a new tendency of the history of the Near East.